


ՊԻՈՍ ԺԱ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ

ՅՈՐԾԼԵԱՐ

1879—1929.

Յիսուն տարի յառաջ՝ 21 Դեկտ. 1879, Հռոմի Սան Կարլոյ ալ Կորսոյ Եկեղեցւոյ խորանին առջեւ կը կանգնէր երիտասարդ նորընծայ քահանայ մը, Լոմբարդիայի Դեզիոյ փոքրիկ քաղաքի համեստ ընտանիքի մը զաւակը, իւր առաջին Ամմար Զոհը մատուցանելու Երկնաւոր Հօր: Լոմբարդացիներու սիրելի տաճարն էր այն, բարձրացած Տիբերիսի ափանց վրայ, նուիրուած Միլանի երկու ակա-



նաւոր եպիսկոպոսներու՝ Ամբրոսիոսի եւ Կարոլոս Բորրոմէոսի յիշատակին: Անոնք անցեալին մէջ սիւներն եղած էին Կաթողիկէ Եկեղեցւոյ. ջանք տարած էին Պետութիւն, Ժողովուրդ եւ Եկեղեցի համախմբելու գաղափարը իրականացնել: Նորընծայ Արեւելէ Ռատիի սիրտը հրավառած էր անոնց ոգովը, երբ նա քահանայական Սկիհը կը վերընծայէր Ամենակալին, ձգելու համար Երկնքի հաշտ աչքը դէպի Երկիր:

Նոր էր կորսնցուցած Եկեղեցին իւր պետական անկախութիւնը. օր աւուր

կը խստանային հալածանքները աշխարհական իշխանութիւններու կողմէն Եկեղեցւոյ դէմ. կը կրկնապատկուէին յարձակումները Վէմին դէմ՝ Եկեղեցին Պետութեան աղախինը դարձնելու ճիգերով: Այս կոիւններու մէջ շատ քան տուժեց Կաթողիկէ Եկեղեցին. բայց թուացան ի վերջոյ հզօրներու աղեղները Հաստադութեան արշալոյսը. լսելի եղան ձայներ թշնամի բանակներէն՝ համերաշխութեան ձեռք կարկառել Եկեղեցւոյ եւ հասկացողութեան ճանապարհով բարեկամական յարաբերութիւններ մշակել անոր հետ: Բիսմարկ առաջինն եղաւ որ գործուած սխալները ճանչցաւ: Պատմութեան յեղաշրջումը իւր պսակը գտաւ տարւոյս Փետրուար 13ին կնքուած Հատերանեան դաշնադրութեան մէջ, որ հան-դիսական գրաւոր երաշխաւորութիւնն էր Քահանայապետի վերապետական իշխանութեան եւ անկախութեան:

Եկեղեցւոյ ազատութեան այս ապահովութիւնը ձեռք բերաւ Պիոս ԺԱ. յա-րատել եւ անվերջը բանակցութիւններով իւր հզօր ախոյանին հետ, ինչպէս եր-բեմն Ամբրոսիոս մը իւր պարագաներու մէջ Կայսերական իշխանութեան հետ: Ոչ միայն ձեռք բերաւ Եկեղեցւոյ ազատութիւնը, այլ եւ անոր սկզբունքները պաշա-պանեց զարմանալի հաստատամտութեամբ հանդէպ ամէն թիրիմացումներու:

Եթէ Ամբրոսիոս մը օրինակ եղաւ իրեն, բայց նա երեւցուց իր վրայ նաեւ Բորրոմէոսի հոգին, որով ջանաց զարկ տալ Եկեղեցւոյ ներքին զարգացման՝ աշխատակցութեան հրաւիրելով Եկեղեցականներուն կից նաեւ աշխարհիկ տարր-ները. նա հիմնեց Կաթողիկէ Գործը (actio catholica), որով կարող էր իւր կազմա-կերպական գաղափարները իրագործել մինչեւ երկրագնտիս ամենահեռաւոր կէտերը, հեթանոս միջավայերու մէջ:

Պիոս ԺԱ. իւր բոլոր տիեզերքը ներփակող գործունէութեան մէջ չէր կրնար անտեսել նաեւ մերձաւոր Արեւելքը. եւ կը տեսնենք իր սրտին մօտ «սիրելի հայ Ազգը», «սիրելի հայ զաւակները». նա կը գուրգուրայ մասնաւորապէս հայ Որբերու վրայ, որոնց մէջ կը տեսնէ «մարտիրոս ժողովրդեան մը որդիները, սուրբերու զաւակները»: Բայց մեզի համար անմիոսանալի պիտի մնայ իր գոր-ծունէութեան պատմութեան մէջ Յունիս 23ը, երբ Կաթողիկէ Եկեղեցւոյ Գլուխը Երանելիներու կարգը բարձրացուց Տէր Կոմիտաս Բէօմիւրճեան նահատակ քա-հանան: Այս մարտիրոսի թափած արեան մէջ կը տեսնէր Պիոս ԺԱ. ամբողջ մարտիրոս ժողովրդեան մը դարերու ընթացքին, բայց մասնաւորապէս վերջին համաշխարհային պատերազմի ընթացքին թափած արիւնը եւ կը գնահատէր:

Կաթողիկէ Եկեղեցւոյ Հովուապետին եւ Հայ Ազգի Բարեկամին առթիւ իր քահանայական յիսնամեայ յոբելեանին մեր ամենախոնարհ եւ որդիական մեծա-րանքները կը մատուցանենք:

Խմբագրութիւն «ՀԱՆԴԻՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ի: